

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Տեղեկատվական Համակարգ
Հեռ.: (374 10) 517 128
Հեռախոս: (374 10) 517 301
Էլ-փոստ: holysee@etchmiadzin.am
Տնօրեն՝ Տ. Վահրամ քին. Մելիքյան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Սեպտեմբերի 29, 2008թ.

**Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հնդիկ Մալանկարա Եկեղեցու
պատվիրակությանը**

Սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մյուռնոփոհների առիթով Մայր Աթոռ ժամանած Հնդիկ Մալանկարա քույր Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Նորին Սրբազնություն Դոկ. Թոմաս Աթանասիոս միտրոպոլիտի և ուղեկցությամբ հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանի:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Մյուռնոփոհների սրբազան արարողությանը նրանց բերած կարևոր մասնակցության համար՝ նշելով, որ Մյուռնոփոհները կարևոր առիթ է քրիստոնյաների համախմբման՝ ի նշան քրիստոնեական սիրո և եղբայրության:

Նորին Սրբությունն իր եղբայրական բարեմաղթանքները փոխանցեց Հնդիկ Մալանկարա Եկեղեցու Հովվապետին և անդրադարձավ առաջիկա նոյեմբերին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու 300-ամյակի առիթով Հնդկաստան կատարելիք Հայրապետական իր այցին, որի շրջանակներում նախատեսվում է նաև այցելություն Բերալա՝ Հնդիկ Մալանկարա Եկեղեցու հոգևոր կենտրոն:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը և գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

###